

Երեւանի մամուլի ակումբի՝ 1999թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1999թ. հունվարի 1-ից մինչև 1999թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 1999թ. հունվարի 1-ի մնացորդը՝ 2,184,872 դրամ 59 լումա եւ ԱՄՆ 3,129 դոլար 45 ցենտ, կազմել է 33,507,434 դրամ 69 լումա եւ ԱՄՆ 28,291 դոլար 74 ցենտ:

Դրանից. ԵՄԱ անդամների անդամավճարներ՝ 181,421 դրամ 20 լումա, «Եվրասիա» հիմնադրամի դրամաշնորհներ՝ 1,496,178 դրամ 30 լումա եւ ԱՄՆ 3,812 դոլար 11 ցենտ, ԱՄՆ կառավարության շնորհագումարի բանկային տոկոսները (ԱՄՆ տեղեկատվական ծառայության միջոցով)՝ 2,796 դրամ 60 լումա, Լրագրության եվրոպական կենտրոնի դրամաշնորհ՝ 2,251,522 դրամ 50 լումա, դրամաշնորհներ Ուինսթոն հիմնադրամի՝ 3,165,258 դրամ 20 լումա եւ ԱՄՆ 21,350 դոլար 18 ցենտ, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի՝ 24,225,389 դրամ (այդ թվում 10,239,977 դրամ 40 լումա անմիջապես փոխանցվել է մատակարարներին):

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է **29,720,277** դրամ 92 լումա (10,239,977 դրամ 40 լումա անմիջապես փոխանցվել է մատակարարներին), որից.

1. Աշխատավարձի վճարման համար ծախսվել է 7,675,684 դրամ 20 լումա:
2. Աշխատավարձից եկամտահարկ եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 4,230,412 դրամ 60 լումա:
3. Չփաստաթղթավորված (ակտով) ծախսերի դիմաց 15% եկամտահարկը կազմել է 91,144 դրամ:
4. Բանկային ծառայությունների համար մուծվել է 2,600 դրամ:
5. ԵՄԱ ամենամյա մրցանակաբաշխության ծախսերը կազմել են 533,268 դրամ:
6. Յուրահանդեսի կազմակերպման (լուսանկարչական իրերի ձեռքբերում) ծախսերը կազմել են 90,848 դրամ 40 լումա:
7. Սարքավորումների ձեռքբերման ծախսերը կազմել են 10,321,610 դրամ 10 լումա:
8. Գրասենյակային, գրենական պիտույքների ծախսերը կազմել են 1,167,393 դրամ 32 լումա:
9. Տպարանային ծախսերը կազմել են 577,000 դրամ:
10. Մամուլի ասուլիսների եւ կլոր սեղանների կազմակերպման ծախսերը կազմել են 275,060 դրամ:
11. Գործուղման ծախսերը (ներառյալ հարկերը) կազմել են 285,550 դրամ:
12. Կապի ծախսերը (ներառյալ միացումները, արձնենտային եւ թուղթավճարները) կազմում են 1,981,102 դրամ 80 լումա:
13. Սեմինարների կազմակերպման ծախսերը կազմել են 2,251,522 դրամ 50 լումա:

Շնորհատու կազմակերպությունների պահանջի համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է 5,444,029 դրամ 07 լումա եւ ԱՄՆ 25,162 դոլար 29 ցենտ: Հայնէրարտքանկի 1999թ. դեկտեմբերի 31-ի փոխարժեքով ԱՄՆ դոլարով վերոհիշյալ գումարը փոխարկված է համարժեք դրամի, միջոցների ընդհանուր մնացորդը կազմել է 18,618,691 դրամ 77 լումա:

Մույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: